ԻՆՉԻ՞Ց Է ԿԱԽՈՒԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԵՏԱԳԱՅ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Զարմանալի չէ, այլ, ընդհակառակը, օրինաչափ պէտք է համարել երկրում ռեակցիայի բռընկման անմիջական եւ համապատասխան արձագանքման փաստը՝ Ադրբեջանում ընդհանրապէս ու մասնաւորապէս Արցախի տարածքում: Ըստ էութեան, բռնապետական երկիրն իր ռեակցիան կամ նրա փորձարկումը սկսել էր դեռ Սումգայիթում, իսկ վերջին ամիսներին այն յատկապէս վճռական ու բացայայտօրէն դրսեւորուեց, երբ Ապրիլի վերջին ու Մայիսի առաջին օրերից սկսած խորհրդային ռազմական մեքենան դուրս եկաւ վարագոյրի հետեւից, թրթուրների ու փողերի տակ առնելով ոչ միայն Գետաշէնն ու Մարտունաշէնը, այլեւ բուն Հայաստանի Հանրապետութեան տարածքը: Հաւանաբար, համապատասխան կանխագուշակութիւնները պէտք էր անել դեռ այդ ժամանակից, երբ երկրի վերին ղեկավարութեան հրահանգով այդ նոյն ռազմական մեքենան դանդաղ սողալով Գետաշէնից-Վերիշէն ոչնչացնում էր ժողովրդավարութեան բարալիկ ծիլերը: Պատահական չէ, որ արցախեան պոլիգոնից յետոյ Միութեամբ մէկ, խունտայի կազմակերպած յեղաշրջումը խանդավառութեամբ ընդունուեց Ադրբեջանում:

Արցախի Հանրապետական կազմկոմիտէն, մարզի շրջաններում ստեղծուած ապօրինի կազմբիւրոները շնորհաւորական հեռագրեր յղեցին Արտակարգ Դրութեան Պետական Կոմիտէի հասցէով: Օգոստոսի 19ին շրջանի զինուորական պարէտ գնդապետ Ժուկովի հրամանով յաջորդող օրերին երկրում կատարուող իրադարձութիւնները ԼՂԻՄի ազգաբնակչութեանն ու Մարզի տարածքում գտնուող ներքին զօրքերի անձնակազմին «քաջատեղեակ պահելու» նպատակով «Խորհրդային Ղարաբաղ» թերթը պէտք է հրապարակէր ԱԴՊԿի հրամաններն ու ՏԱԱՍ գործակալութեան պաշտօնական հաղորդագրութիւնները: Իսկ հրամանը չկատարելու դէպքում Օգոստոսի 21ին պարէտատունը սպառնացել էր, թէ կը փակի թերթը, որին ի պատասխան «Խորհրդային Ղարաբաղ»-ը յաջորդ օրը լոյս չտեսաւ:

Օգոստոսի 21ին Բաքւում հանդիպելով Մութալիբովն ու ԽՍՀՄ գլխաւոր զինուորական դատախազ Ալեքսանդր Կատուսեւը յատուկ քննարկել էին ԼՂԻՄում ստեղծուած իրավիճակը: Ըստ «Բակինսկի ռաբոչի» թերթի հաղորդագրութեան, հանդիպման մասնակիցները մեծ ուշադրութիւն էին դարձրել «հայ ահաբեկիչներ»ի զինաթափման ու չեզոքացման գործում քաղաքացիական եւ զինուորական արդարադատութեան մարմինների փոխհամագործակցութեան հարցերին: Այս նոյն՝ շատերի համար վտանգաւոր օրերին Արցախում ոչ միայն չդադարեցին ազերիների կողմից իրականացուող թալանի, աւազակային յարձակումների փաստերը, այլ դրանք աւելի ակտիւ բնոյթ ընդունեցին:

Իհարկէ, դրութիւնը առանձնապէս սրուեց յատկապէս լարուած օղակում՝ որն է Շահումեանի շրջանը: Զօրքի օգնութեամբ իրականացուող յարձակումները ընդունեցին աւելի կատաղի բնոյթ:

Ստեփանակերտում Օգոստոսի 23ին կայացած խորհրդակցութեան ժամանակ, որին մասնակցում էին մարզի եւ քաղաքի իշխանութեան ներկայացուցիչները, ինչպէս եւ հիմնարկ ձեռնարկութիւնների ղեկավարները, մարզգործկոմի նախագահի պաշտօնակատար Լէոնարդ Պետրոսեանը խոստովանեց, որ «առճակատումից-երկխօսութեան» նոր քաղաքականութիւնը փաստօրէն ոչ մի արդիւնք չի տուել: Այստեղ իմիջիայլոց հարցնենք այս «նոր քաղաքականութեան» ջատագովներին, թէ իսկապէ՞ս այլ ելք էին կանխատեսում: Իհարկէ, պատմական աւանդներին հաւատարիմ ազերիները խունտայի տապալումից յետոյ նորից «փոխեցին փափախները»ը, իսկ Օգոստոսի 24ին Ադրբեջանի նախագահի թեկնածու Զարդուշտ Ալիզադէն կոչ արեց վերանայել հանրապետական կազմկոմիտէի կարգավիճակը եւ նախագահի պաշտօնից հեռացնել Վիկտոր Պոլեանիչկոյին: Նա յայտարարեց, որ չի կարող բացատրել, թէ ինչու պէտք է դիմել այդ քայլին եւ բազմանշանակալից ենթատեքստով աւելացրեց՝ «բայց ներկայ իրավիճակում դա անհրաժեշտ է»:

Իհարկէ, յաջորդող օրերին, իրեն վարկաբեկած եւ վտանգաւոր ձեւով աւելորդ դարձած կազմկոմիտէն հեռացաւ մարզից, սակայն, որ ամենազարմանալին է, չդադարեցին զօրքի ու ազերիների համատեղ ռազմական գործողութիւնները Շահումեանի շրջանում: Որքան էլ պարադոքսալ է, այս օրերին, երբ մոսկովեան քաղաքական բեմերից ժողովրդավարութեան վերջնական յաղթանակի ու հանրապետութիւնների ինքնիշխանութեան հաստատման շուրջ դիֆերամբներ են հնչում, խորհրդային խունտան շարունակում է ապրել ու գործել Արցախի հայաբնակ տարածքներում: Ի շահ ճշմարտութեան պէտք է նշել, որ հայկական կողմը այնուամենայնիւ կարողանում է պաշտպանուել ու հակահարուած կազմակերպել ինչպէս նշեալ, այնպէս էլ ուրիշ բնակավայրերում:

Ինչեւէ, ակնյայտ է, որ Արցախի հետագայ ճակատագիրը մեծապէս կախուած է նրանից, թէ Մոսկուայում ժայթքած քաղաքական հրաբուխը որ ուղղութեամբ կը տարածուի ու վերջնականօրէն կը կաղապարուի: Արցախի անունը նորից հնչեց ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդում: Նորից ակտիւացաւ անդրկուլիսեան պայքարը, որը գուցէ թէ ամենավճռորոշն է: Ռուսաստանի մի շարք պատգամաւորներ՝ այդ թւում մարդիկ, որ վերջին շրջանում եղել են Արցախում, պատրաստակամ են աջակցելու եւ օգնելու հայկական պատգամաւորական խմբին: Առջեւում Արցախի՝ այն է հայութեան համար, ճակատագրական օրեր են: Մօտ ապագան իր հետ կը բերի որոշակի պարզեցումներ: